

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

«Գիւղական քահանաների համար» կոչուող հանդէսում մի յօդուած լոյս տեսաւ «Ուղղափառ քահանան աղանդով վարակուած գիւղում» վերնագրի ներքոյ: Յօդուածագիրն այն միտքն է յայտնում, որ շատ մեծ նշանակութիւն են տալիս աղանդաւորների դէմ կռուող միսիոնարների գործունէութեանը: Այս կամ այն կրօնական համոզմունքները, հայեացքները վայրկենաբար չեն առաջ եկել. դրա ծնունդ են ամբողջ կեանքի, այն էլ ոչ թէ մի մարդու, այլ ամբողջ սերունդների դարաւոր կեանքի: Ուստի և այս կամ այն վայրում տարիներից ի վեր բուն դրած աղանդը վերջացնելու համար միսիոնարի մի երկու, թէկուզ տասն անգամ արած այցելութիւնները բաւական չեն, որովհետեւ միսիոնարը այդ ժողովրդի համար նոր մարդ է, հեռաւարտ անծանօթ ժողովրդի նկատու կացին, սովորութիւնների: Այստեղից միայն այն եզրակացութեան ենք դալիս, որ աղանդի դէմ մաքառելու դժուարին գործը յանձնել պէտք է ծխական քահանային, հաւատացած լինելով, որ սա աւելի շատ բան կարող է կատարել այդ գործում: Միսիոնարը բաւական է միայն քահանային խորհուրդներ տալ, հարկաւոր գրքերը հասցնէ: Իսկ քահանան իսկոյն և եթ չպէտք է սկսէ աղանդը արմատախիւ անել, այլ սկզբում հող պէտք է պատրաստէ՝ նա պէտք է աշխատէ աղանդն առաջ բերող պատճառների հետ ծանօթանալ, մօտենալ աղանդի ներկայացուցիչներին, չպէտք է յայտնի կերպով բանակռուի մէջ մօտէ, այլ նոցա հետ ընտանեկան զրոյցներ անէ, աշխատելով ազդել նոցա հոգու վերայ: Միով ըանիւ քահանան պէտք է սկզբում աշխատէ դատարարակէ՝ սկսելով ամենահասարակ բաներից, բայց միշտ խոհեմութեամբ: Հրապարակական վիճաբանութիւնից խուսափելու է նախնորա համար, որ աղանդաւորի անձնասիրութեանն է կաշոււմ. քանի որ աղանդաւորը, թէև պարտուած քահանայի ապացոյցներից, շարունակում է նորից վէճը, որպէս զի իւր համախոհների առաջ անպատիւ չմնայ: Երկրորդ՝ վիճաբանութեան միջոցին շատ անգամ դժուար է լինում անպայմանօրէն անհրաժեշտ սառնասրտութիւնը պահպանել և խօսակցութեանը դուր ընտել-

ըութիւն չտալ: Աղանդաւորները սիրում են, որ իրենց հետ քաղ-
ցրութեամբ վարուեն: Ծխական քահանան կարող է և դպրոցի մի-
ջոցաւ կռուել աղանդի դէմ՝ ուսում տալով աղանդաւոր երեխա-
ներին: Սակայն այստեղ էլ կէտ նպատակի հարկաւոր չէ դնել ա-
ղանդը արմատախիլ անելը և երեխաներից էլ պահանջել, որ սոքա
այս կամ այն կրօնական հայեացքներին քննադատօրէն վերաբե-
րուեն:

Աղանդի հետ մօտենալու և եղած խտրութիւնը վերացնելու
համար լաւ միջոց է և եղբայրական օգնութիւն տալն աղանդա-
ւորներին հայ շեղած տարին: Ծուխի մէջ գիր և կարգաւ իմա-
ցողները կարող են հարկաւոր գրքերն առնել և աղանդաւորներին
առաջ կարգաւ:

„Церк. Вѣст.“ այս տեսութեանը հաւանում է, ասե-
լով, որ դեռ հանգուցեալ պրոֆ. Իւան Ֆէօդորովիչ Նէյլսկին շատ
մեծ յոյսեր չունէր միսիոնարներին վերայ, որոնք մի մի իշխանա-
ւոր են համարում իրենց ծխական քահանաների գլխին: Հան-
գուցեալն էլ, որ շատ լաւ էր իմանում աղանդի պատմութիւնը,
դրական օգուտ ուպատում էր աւելի ծխ. քահանաներից, որ-
պէս իրենց ժողովրդի սովորութիւններին, նկատ ու կացին գիտակ
մարդկանցից, քան թէ միսիոնարներից, որոնք շատ անգամ իրենց
այց ելած վայրերում միայն հոգեկան անհանգստութիւն և վըր-
դովմունք են թողնում:

— „Церк. Вѣст.“-ում տպուած է Աօլինի թեմական ա-
ռաջնորդ Սըբաղան Անտոնիյի մի շքաբերականը, որ նա ուղ-
ղել է նոյն թեմի հոգեւորականութեանը: Շքաբերական հանելու
առիթ են տուել քիչ առաջ պատահած գիւղական անկարգու-
թիւնները, որոնք ապացուցանում են, թէ ժողովուրդն իւր մօտ
վստահելի մարդիկ չունի, որպէս զի ցոյց տային, թէ որքան դա-
տարկ են անկարգութեան գրգող յոյսերը: Այսպիսի վստահելի
մարդիկ միայն կարող են քահանաները լինել: Բայց քանն այն է,
որ ժողովրդին ոգևորող դատարկ յոյսերի նշանակութիւնը քա-
հանաներն իրենք էլ չեն հասկացել, որ նոքա նոյն իսկ իրենց
ծուխերի մէջ առաջադաս ազմուկների մասին դադարաւոր չեն
ունեցել: Դա ապացուցանում է, որ ժողովրդի և քահանաների մէջ
եղած ըարսյական կապը թուլացել է: Իսկ այսպիսի երկուստեք
սառնասրտութեան պատճառն այն է, որ հոգեւորականութիւնը
ժողովրդին թողած բարձր դասակարգին է դիմում, որ եկեղեցա-
կանութիւնից դէպի աշխարհայինն է ձգտում: Դեռ դպրոցում
երիտասարդները և օրիորդները, որոնք ապագայ քահանաներն
են և մայրեր, անգիտակցօրէն սկսում են սնտի կեանքին երկր-

պագութիւն տալ: Երիտասարդ քահանան որք դնելով իւր ծուխը՝ սկսում է «դեղի իշխաններին» և «աղաներին» աւելի պատուով վերաբերուել, և սորանով նմանում է աւստրալիական վայրենիներին, որոնք իրենց ոսկիները և թանկագին քարերը Եւրոպացիների ապակիների հետ էին փոխում: Քահանան երկրայինով է աւելի զբաղուած, ձիաներ ունենալու հոգան է քաշում, հոգեր է ձեռք բերում և ջութակահար դառնում: Երիտասարդ քահանաները ուղղափառ ժամասացութեանը կէս—կաթուղի, կէս—բողոքական կերպով են վերաբերում՝ աստուածապաշտական կարգերին, ծնրադրութեանը, պատին նշանակութիւն չեն տալիս, եկեղեցական արարողութիւններին մէջ աշխատում են իտալական երաժշտութիւն մտցնել:

Սորա հակառակ սրբազանը նկարագրում է անձնադոհ քահանայի տիպը: Անձնադոհ քահանան նախ պէտք է հասկանայ, որ իւր ժողովուրդը տեսակ—տեսակ մարդկանցից է բաղկացած, որ նոցանից իւրաքանչիւրն իւր պէտքերը և ցաւերն ունի, որ քահանան էլ դորա համեմատ պէտք է դործէ: Նւ որ գլխաւորն է, քահանան պարտաւոր է անթերի կերպով կատարել այն ամէնը, ինչ որ իւր ծուխի մէջ ծնուողներն են պահանջում, սկսած ծննդեան օրից մինչև մահը: Նա նախ ինքը պարտաւոր է ամէն օր ս. Դիքք և Ոսկեքերան կարդալ, և ապա ժողովրդին մեկնել: Այժմ ժողովուրդը թշնամութեամբ է նայում իւր հոգևորականութեան վերայ, վերջինիս պարտադանց գտնուելուն համար: Բայց եթէ հոգևորականութիւնը սկսէ իւր դիրքին վայել ապրել և գործել, ինչպէս բոլոր յիշուեց վերը, այն ժամանակ կարող է գրաւել ժողովրդին և իւր հետ միացնել:

Այս շրջաբերականի առթիւ „МОСК. ВѢД.“ իւր դիտողութիւններն է անում: Լրագիրն ասում է. մենք ուզում ենք կրթուած, ուսում առած քահանայ, բոլորիս կարծիքն այս լինելով հանդերձ՝ մենք քահանայի ճշմարիտ քրիստոնէական կոչումը զանց ենք անում, եթէ գիւղական քահանան դպրոցի մասին լաւ հոգացողութիւն ունի, իւր ծուխի բարօրութեանը համար որ և է բան արել է, և եթէ բժշկութիւնից էլ տարրական տեղեկութիւններ ունի, որպէս զի պէտք եղած ժամանակը կարողանայ գիւղացիներին խորհուրդներ տալ,—ապա կրթուած աշխարհականներս այնպէս ենք տրամադիր կարծելու, որ նա իւր կոչմանն է ծառայում, որ դէպի հովուական պարտաւորութիւնները տանող ճանապարհի վերայ է կանգնած: Այսպիսով աւելի ենք նշանակութիւն տալիս քահանայի արտաքին, նիւթական գործունէութեանը, քան ներքին և հոգևոր, և մենք աշխարհական—

ներս աշխատելով «հոգևորականութեան նշանակութիւնը քար-
ձրացնել» հովիւներին վզին ենք կապում աշխարհի երեսին գտնուած
բոլոր պարտաւորութիւնները, մանկաբարձութիւն, դիւղատնտե-
սութիւն, տեղագրութիւն ևլն: Այն ինչ մեզ հարկաւոր է այնպիսի
հովիւ, որպիսին մատնանիշ է անում Սրբազան Անտոնիյն: Նորա-
ստած քահանան ուրիշ է, և մեր պահանջածը քահանայ—ման-
կաբարձ, քահանայ—տնտես, քահանայ ուսուցիչ ևլն:

—Սեպտեմբերի 18-ին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայ-
սրուհին Սեպտապոլից այցելութեան եկան Խեռսոնէսի վանքը:
Այս այցելութեան նկարագիրը տալիս է „Новое Время“-ի թղթ-
թակիցը:

Տաճարի նախադրանք Նոցա Մեծութիւններին դիմաւորեց
Տաւրիկեան թեմի առաջնորդ Նիկողայ եպիսկոպոսը, իւր հետ ու-
նենալով Խեռսոնէսի վանահայր Իննոկենտիոս եպիսկոպոսին,
Անտոնիյ եպիսկոպոսին, որ Գոնսկիյ վանքումն է ապրում, Սեա-
ստապոլի յուշահան եկեղեցու վարդապետ Ամբրոսիոսին, և Նոյն
քաղաքի քահանայական դասը, Նոցին Մեծութիւնները համ-
բուրելով խաչը տաճար մտան, որի յատակը ծածկուած էր
խոտով և ծաղիկներով: Նիկողայ եպիսկոպոսը Նոցին Մեծու-
թեանց ողջունեց հետեւալ ճառով. «Ձերդ Կայսերական Մե-
ծութիւնը՝ Ամենաբարեպաշտ Թագաւոր և Ամենաբարեպաշտ
Թագուհի, ինչպէս միշտ Ձեր բոլոր հաւատարիմ հպատակ-
ները, այնպէս և մենք այս սրբազան հաստատութեան բնա-
կիչներս և Տաւրիկեան բոլոր հոգևորականութեան ներկայացու-
ցիչները սրտազին ուրախութեամբ այս սուրբ տաճարում ընդ-
առաջում ենք Ձեզ և անկեղծ սիրով Ձեր բարի գալուստն ենք
ողջունում Ձեր մօտիկ մեր թեմի սահմաններում, և որտաղինս
ցանկանում ենք ամէն բարիք—թէ երկնային և թէ երկրային,
ցանկանում ենք առողջութիւն, հոգեկան խաղաղութիւն և ու-
րախութիւն ի Հոգին Սուրբ: Խոնարհում ենք Ձեր առաջ և բոլոր
սրտով շնորհակալութիւն յայանում, որ ուշադրութեան առաջ
մեր տնապատային բնակութիւնը, և ևս առաւել շնորհակալ ենք
Ձեր այն շնորհներին համար, որպիսիք Գուր միշտ ցոյց էր տուել
և վերջին ժամանակ էլ առանձին առատութեամբ թափեցիք քա-
հանայական դասակարգի վերայ՝ շնորհելով կենսաթոշակի կանո-
նադրութիւնը, Հաւատացէք Ձերդ Մեծութիւն, որ Ձեր այդ
շնորհքը ոչ միայն որբացած հոգևորականութեան աչքից ար-
տասուր կ'սրբէ, այլ և Ձեզ համար շատ և շատ աղօթաւորներ
կստեղծէ, թէ ներկայումս և թէ ամենահեռու ապագայում:
Ի նշան առ Ձեզ ունեցած հաւատարիմ հպատակութեան»

Ամենաբարեպաշտ Թագաւոր և Ամենաբարեպաշտ Թագուհի, մատուցանում ենք Ձեզ Ս. Նիկողայի պատկերը, որը պաշտպան է և ապաւէն դէպի ինքը հաւատով դիմողներին, նոյնպէս մատուցանում ենք այս բնակութեան և ամբողջ Տաւրիկեան երկրի երկնային պաշտպաններ Խեռսոնի եօթը սուրբ նահատակների պատկերը: Աստուածային այս արժանաւորաց և առաքելապատիւ իշխան Ալադիմիրի ազօթքներով, որը ամբողջ Ռուսաստանի լուսաւորին է և որը մկրտուեց այստեղ, թող պահպանէ Աստուած Ձեր մուտքը և ելքը այժմ և յաւիտեան, ամէն:

Ս. Պատկերները և սրբազան մասունքները համբուրելով և Նիկողայ եպիսկոպոսին շնորհակալութիւն ասելով Նոցին Մեծութիւնները «Փրկես՝ Տէր» երգելու միջոցին համբուրեցին և Ս. Ալադիմիրի նշխարները: Այցելելով տեղի թանգարանը, պեղումները և բոլոր տեղական հնութիւնները դիտելով, Նոցին Մեծութիւնները կրկին անգամ Սրբազան Նիկողային և ժողովրդին շնորհակալութիւն ասացին և մեկնեցին դէպի Սեաստապոլ:

— Անցեալները Աիլյնայում մեռաւ Նոյն շրջանի կառավարիչ Գուրզինը: Ռուսաց թեմական առաջնորդը նորա համար հոգեհանգիստ կատարելն արգելում է՝ պատճառ բերելով թէ հանգուցեալը կաթոլիկ է եղել: Այս հանգամանքը խիստ վրդովում է ստորագրեալ զինուորականներին, որոնք և խնդրել էին հոգեհանգստի համար, և դոցանից մէկը մի նամակ է գրում «Тражданинъ» լրագրին: Նամակագիրն ասում է, որ Գուրզինը ոչ միայն համակրութեան էր արժանացել, այլ և տեղական բոլոր դասակարգերի սէրն էր վայելում, ուստի և թեմական իշխանութեան վարմունքը վերաւորում է շատ շատերին:

Նամակին տեղ տալով լրագրում և այս դէպքը իւր սրտին մօտ ընդունելով, խմբագրութիւնն ասում է, որ Աիլյնայի թեմական իշխանութիւնը յուզել է և վերաւորել թերեւս ամբողջ ռուս զինուորական ընտանիքին՝ օրէնքի տառը կատարած լինելու համար: Այն մարդը, որ իւր ամբողջ կեանքը զոհ է բերել Թագաւորին, Ռուսաստանին և դրօշակին, լինելով ազնուազոյններից ազնուազոյնը և լաւերից լաւը, որ կաթոլիկ դաւանութեան պատկանելով հանդերձ հայրենակիցներին օրինակ էր տալիս, թէ ինչպէս հայրենի կրօնը արդեւ չէր լինում հաւատարմութեամբ ծառայելու իշխանութեանը, և այդ հաւատարմութեան համար հասել էր ամբողջ Աիլյնայի շրջանի կառավարչի և ղօրբերի հրամանատարի ըսածը պաշտօններին, այսօր Աիլյնայի թեմական իշխանութեան կողմից մի հոգեհանգստեան անգամ չի արժանանում: Այդ նշանակում է ամբողջ զինուորական դասը սառեցնել Ռուսաց եկեղեցուց:

Церк. Вѣст., այս առթիւ ասում է, որ թեմական իշխանութիւնն էլ իւր վարժուները արդարացի կարող է համարել: Բանն այն է, որ այլադաւաններն՝ կաթողիկոսների, հայերի, բողոքականների, համար հոգեհանգիստ կատարելու մասին չկան պարտադիր, որոշ եկեղեցական կանոններ: Աւելորդութիւններն այլադաւան ազգականների համար ռուսաց եկեղեցին թոյլ է տուել, որ հոգեհանգիստ կատարուի: դրդուած քրիստոնէական սիրուց, յարգելով այն բարոյական կապը, որ կայ ուղղափառների և իրանց այլադաւան ազգականների մէջ: Գործնական կեանքի մէջ երկուսի համար էլ օրինակներ կան. եղել են դէպքեր, երբ ուղղափառը իւր այլադաւան ազգականի համար հոգեհանգստեան իրաւունք ստացել է, և եղել է, որ մերժուել են: Ռուսաց եկեղեցու հեղինակաւոր հայրերից մեծրապօլիտ Գիլարէտը ԱնտոնիՅ վարդապետի հետ ունեցած գրադրութեան մէջ ասում է, որ այսպիսի դէպքում երեք հանդամանք պէտք է ի նկատի առնել. առաջին, տնային է արդեօք աղօթքը թէ հրապարակական. երկրորդ, մեռնող այլադաւանների անձնական յարաբերութիւնը դէպի ուղղափառ եկեղեցին, այսինքն մեռնողը պատշաճ յարգանքով էր վերաբերուում արդեօք դէպի այդ եկեղեցին. երրորդ, ուղղափառների տրամադրութիւնը՝ մի՞գուցէ կատարած արարողութիւնը գայթակղութեան և վրդովմունքի պատճառ դառնայ: Ինչ էլ որ լինի, շարունակում է լրագիրը, քանի որոշեալ և պարտադիր ձև չի մշակուած, միշտ թիւրիմացութիւններ կլինեն: Միակ ելքն այն է ուրեմն, որ մի այդպիսի ձև մշակուի:

Նոյն թերթի 42 համարում հոգեհանգստեան կարգի մասին այս հետաքրքրական բացատրութիւնն ենք կարդում: Ս. Գիրքը արդեւք չի դնում, որ ուղղափառը իւր այլադաւան ազգականների համար աղօթէ. աղօթքը նախ աղօթողի համար մխիթարութիւն է, և երկրորդ ուղղափառ աղօթարարն այն յուսով է համակուում, թէ Աստուած կողորմի ուղղափառ եկեղեցու յարաբերութիւնից դուրս մեռնողին: Այս աղօթքը անձնական աղօթք է և տան մէջ փակ կարող է կատարուել: Աւերիչ բան է եկեղեցում կատարուած աղօթքը՝ հոգեհանգիստը: Եկեղեցում կատարուած աղօթքը սոսկ խնդրուածք չէ սորա կամ նորա համար, այլ և հաւատոյ խոստովանութիւն: Ս. Հայրերի որոշած հոգեհանգստեան կարգը միայն ուղղափառների համար կարելի է կատարել, որովհետեւ Ս. Հոգու շնորհաբաշխութեան քնաւորութիւն ունի այն, և պէտք է կատարուի ուրեմն միայն նոցա համար: որոնք այդ շնորհներին մասնակից լինելու պատրաստութիւն ունեցել են:

Գուերդինի հոգեհանգստեան առթիւ „С. П. В.“ մի հետաքրքրական պատմութիւն է անուամբ Այլադաւան Գառաջը ծանր կերպով հիւանդացել էր: Բանտի ծառայողները խնդրում են իրենց բաճանայ հ. Օսլովին հիւանդի առողջութեան համար պատարագ մատուցանել: Սա չհամարձակուելով այդ անել, գնում մետրապոլիտ Ֆիլարէտին յայտնում է իւր դժուար դրութիւնը: Ֆիլարէտ ասում է, որ Աստուած բոլոր կենդանիների համար հրամայել է աղօթել, քահանային պատուիրում է նշխարք տանել հիւանդին և խոտանում, որ ինքն էլ շուտով կերթայ հիւանդին այցելութեան: Է. Օսլովը դալիս է, պատարագ է մատուցանում, հիւանդի համար աղօթում է և դնում հիւանդի մօտ, այնտեղ արդէն նստած էր մետրապոլիտ Ֆիլարէտը, որի հետ Գառաջը յաճախ վիճաբանելիս է եղել: — «Այո, ասում է վերջը լրագիրը, եղել է 1853 թ.»: «Մի՞թէ, համարեա կէս դար առաջ, Մոսկուայի Սրբազանը սխալմամբ է թոյլ տուել այն, ինչ որ այսօր այդպէս խօսութեամբ մերժեց Ալիշնայի թեմական իշխանութիւնը» *:

— „СВѢТЪ“ լրագրում Լիտովի արքեպիսկոպոսի քարտուղարը Ալիշնայի թեմական իշխանութեան վարմունքն արդարացող մի շարք բացատրութիւններ է բերել: Նա ասում է, որ Արևմտեան մասում այլադաւանները ճնշող քանակութեամբ ուղղափառներից շատ են և որ մոլեռանդ կաթոլիկները ամէն քայլափոխում առիթ են որոնում ուղղափառ դաւանութիւնը նուաստացնելու: Կաթոլիկներն այն միտքն են փայլում, թէ համաշխարհային ճշմարիտ կրօնը միայն կաթոլիկութիւնն է, որի առաջ նոյն իսկ ուղղափառութիւնը պէտք է նսեմանայ և հեղութեամբ դալիս խոնարհեցնէ: Նոյն ասելով՝ առօրեայ դէպքերը և համաշխարհային նշանակութիւն ունեցող իրողութիւնները կաթոլիկութեան և սորա կարծեցեալ մեծութեան օգտին են ծառայում, իսկ երբ բանը դալիս է ուղղափառ կրօնը ստորացնելուն, մէջ են բերում իբրև անհերքելի ապացոյցներ զանազան բամբասանքներ: Նոքա ուղղափառ քահանաներին չեն թոյլ տալիս քրիստոնեաների ընդհանուր գերեզմանատանը ուղղափառ ննջեցեալների համար հոգեհանգիստ կառարել. կսենզները սոցա գերեզմանաբարերը և մահարձանները հրամայում են պոկել, կոտրատել և շինութեան համար բանացնել. Ժողովուրդը պատուէրներ է ստանում կսենզներ

* Այս պատմութիւնը լրագիրը հանել է Գառաջի կենսագրութիւնից, որ գրել է Ա. Ֆ. Վոնին:

ըից ռուսաց եկեղեցու առաջով անցնելիս չխաչակնքել և ուղղափառ քահանաների մօտով անցնելիս դիտարկ չվերցնել: Հատերը դեռ կլիշեն, թէ ինչպէս պատուեց կաթոլիկ հոգևորականութիւնը Վիլնայում մեռնող երկու բարձրաստիճան ռուս պաշտօնեաներին՝ տեղական դէներալ—նահանգապետ Օռթևսկուն և զօրքերի հրամանատար դէներալ Տրօցկուն, որն աւելի արժանիք ունեցող մի անձն էր, քան Գուրդինը: Նա զրկեց սոցա վերջին պատիւներէից, և շատ եկեղեցիների գանգաղատները զիտմամբ կողպել էին, որ նոցանից ոչ մի հնչիւն չսուէր: Այս հանգամանքները շատ լաւ գիտէր Վիլնայի թեմական իշխանութիւնը, երբ արգելեց Գուրդինի համար հոգեհանգիստ կատարելը:

— Սլոնական շարժումներին համակրութեամբ են վերաբերուում և ռուսաց եկեղեցու ներկայացուցիչները, որոնցից մէկը, յայտնի քարոզիչ Պետրով քահանան՝ մի քաւական հետաքրքրական յօդուած է գրել „Южный Край“ լրագրում՝ «հրէական թաղաւորութիւն» վերնագրով: Նա ասում է, որ ընդհանրապէս հրէաների նկատմամբ արուած դատողութիւնները տալիակ և անհեռատես խոհականութեան արդիւնք են: Միայն հրէաների կեանքի մութ կողմերն են քննում, առանց այդ մութ կողմերն ստեղծող պայմաններն ի նկատի առնելու: Մենք շատ լաւ գիտենք թէ ո՛վ էր Վենետիկի վաճառականը, Հէկսպիլի Հէյլօլը. մենք ծանօթ ենք հրէայ խաբեբայի, արիւնարբուի հետ, որը կենդանի մարդու մարմնից մի գրուանքայ միս կտրելու ընդունակութիւն ունէր. բայց մոռանում ենք Լեսոինդի հրէայ—Նաթան իմաստունին: Ամեն անգամ հրէութեան մասին խօսելիս օրինակ ենք բերում խորամանկ և ճարպիկ հրէայ տիպերը, առանց յիշելու, որ Բարուք Սպինոզան հրէայ էր ու մեծ գիտնական, որ Աւետարանի առաջին քարոզիչները—առաքեալները հրէաներ էին, որ քրիստոնէական կրօնը հրէութիւնից ծնունդ առաւ, որ կանացի մաքուր հոգու կատարելագոյն տիպը—Ս. Կոյսը՝ հրէայ աղջիկ էր: Կասկած չկայ, որ պատմական և ժամանակակից հրէութիւնը մութ կողմեր և տէքի ընկնող շատ թերութիւններ ունեցել է և ունի. բայց մի՞թէ մարդկութեան միւս ազգերը բոլորն էլ արդար են և առանց պակասութիւնների: Եթէ շնացեալ կնոջ փոխարէն այդ ազգերը մի հրէայի ձեռքերը և ոտքերը կապտած բերէին Յիսուսի մօտ և ասէին. «Զի՞նչ ասես վասն դորա», անշուշտ նորա բերանից կսէին կրկին. «Անմեղն ի ձէնջ՝ նախ նա ընկեացէ քար ի վերայ դորա»: Կասկած չկայ, որ ամբողջ դատաւարութիւնը նոյն վախճանը կունենար. խիստ դատաւորները պէտք է բարկութեամբ և վրդոված երեսները շուռ տային: Մենք բոլորս

էլ ջուհուդուրիւն ունինք. եթէ այդ ջուհուդուրիւնը, որը մենք միայն հրէաների մէջ ենք տրամադիր տեսնելու՝ մեզ վրդովում է, ապա անհրաժեշտ է կռուել դորա դէմ, այսինքն այն շարիքներէ գէմ, որ ամբողջ մարդկութեան մէջ բուն է դրել և որ համարամարդկային խնդիր է, և ոչ միայն քացառապէս հրէաներին է վերաբերում: Զուհուդուրիւնը լինտուենք ամբողջ մարդկութեան մէջ, ոչ թէ հրէութեան, որ ինքնորոյն ազգութիւն է. ջուհուդուրիւնը լինտուենք, գտնենք և հետը կռուենք բոլոր մարդկանց և մեր մէջ, և ոչ միայն հրէաների, որոնք մեզ նման մարդիկ են:

— Անցեալ օգոստոսին Պերմի թեմի միսիոնարները ժողովն այն եղբակացութեան եկաւ, որ միսիոնի յաջողութեան գլխաւոր պայմանը դործունէութեան տեղի, պայմանների, ժողովուրդի նիստ ու կացի վերաբերմամբ ունեցած ծանօթութիւնն է, որից այնքան զուրկ են միսիոնարները: Հարունակ նոր տիպի աղանդներ են առաջ գալիս՝ սնունդ ստանալով թէ ուղղափառ հասարակութիւնից և թէ հերձուածներից, այն ինչ միսիոնարը միայն մի աղանդ է իմանում, որը հետ և կռուում է: Նոր տեսակի աղանդաւոր ուսուցիչների վերայ այս ժողովում մատնանիշ արաւ թեմի միսիոնար Լօզինովսկի քահանան: Սոքա հին տպագիր գրքերի փոխարէն օգտուում են նախնական կրօնական գրքերից, որոնք ռուս թարգմանութեամբ լոյս են տեսել: Այս գրքերի մէջ ուսուցիչները եռանդուն կերպով նորանոր փաստեր են որոնում իրենց աղանդի պաշտպանութեան համար, զանց առնելով այնպիսի քաներ, որոնք ի նպաստ աղանդի չեն խօսում: Աղանդի ներկայացուցիչները օգտուում են և ուղղափառ նոր հեղինակների շարադրութիւններից: Ուստի և միսիոնարներն էլ նոցա գէմ նոր հնարներ պէտք է մտածեն: Է. Լօզինովսկին ինքը Ս. Գրքից և եկեղեցական ուղղափառ հայրերի գրութեանց քաղութեան է արել, որոնք ռուսաց եկեղեցու ուղղափառութեան համար ապացոյցներ են: Այս քաղութեանը ժողովականների կողմից հաւանութիւն գտան, որոնք և վճռեցին տպագրել և բոլոր իրենցով տարածել միսիոնարների և ծխական քահանաների մէջ: Ի նկատի առնելով այն հանդամանքը, որ այդ քաղութեանը դէմ աղանդաւորները ջորեղ պատճառաբանութիւններ կարող են անել, ժողովը հետեւեալ հարցերի մասին մտածեց. 1) Ի՞նչ պատասխան տալ աղանդաւորների այս հարցին. Քրիստոս նոր ուխտի եկեղեցին երբ հիմնեց՝ Հոգեգալուստից յետոյ թէ առաջ. 2) Ի՞նչ է եկեղեցին. 3) Ե՞րբ Յիսուս իւր աշակերտներին եպիսկոպոսական իշխանութիւն տուեց. 4) Մինչև Հոգեգալուստ առաքեալները մկրտութիւն արել են թէ չէ. եթէ արել են, այդ մկրտութիւնը մկր-

տուածներին մեղքերը քաւում էր թէ չէ, և այլն: Եւ „Перк. Вѣст.“ ասում է, որ ժողովն այդ հարցերին զօրեղ պատասխաններ է տուել:

Բանն այն է, որ որչափ ռուս հոգևորականութիւնն աւելի և աւելի եռանդուն կերպով է կռւում աղանդաւորների դէմ, կամ ճիշտն ասած պաշտպանութեամբ նոցանից՝ նոյնքան էլ ազանդը տարածութեամբ է և նորա մէջ նորանոր ուղղութիւններ են մտնում: Այսպիսի մի նոր տեսակ աղանդական երևոյթի մասին է պատմում „Моск. Перк. Вѣст.“ թերթը. «Նստում ես սեղան ճաշելու կամ ընթերցու, աղօթի՛ր, ինչպէս որ սահմանուած է. ուտելու միջոցին աղօթի՛ր, Աստուծոյ մասին մտածի՛ր, այն ժամանակ Աստուծոյ հրեշտակները քեզ մօտ կգան, կըրջապատեն քեզ, քո հասարակ հացը աստուածային հաց կգառնայ, իսկ բաժակդ երկնային. Տէրն Խնքը քեզ վերայ սիրով կնայի, նա ինքը քեզ սեղանակից կլինի: Այսպիսով քո հասարակ հացը Հաղորդութեան կիօխարինուի»:

— Անցեալները լայս է տեսել «Միսիոնարական ընկերութեան» 1901 թուի հաշիւը: Այդ հաշուից երևում էր, որ ուղղափառ միսիոներ բաւական յաջողութիւններ է ունեցել նոյն թուականի ընթացքում. մօտ 5000 հոգի հեթանոս և մահմեդական ուղղափառութիւն են ընդունել, դեռ հաշուի չառնելով այն հանգամանքը, որ միսիոնի վերայ էր ծանրացած և նորադարձ աշխատանքներն քրիստոնէական կրթութիւն տալու գործը: Ընկերութեան անդամների թիւը եղել է 17,172. արդիւնը 590,684 ռ. իսկ ծախք 622,094 ռ. ընկերութիւնը 1,367,735 ռ. դրամագլուխ է ունեցել:

Այս հաշուի առթիւ „Моск. Вѣст.“ լրագրում մէկը (И. Т. ստորագրութեամբ), միսիոնարական գործի համար ասում է, որ ընկերութիւնը պէտք է լաւ ծրագիր ունենայ, հաշիւները հարկաւոր կերպով տրուին, որպէս զի Ռուսաստանը միջոց ունենայ ընկերութեան գործունէութեան հետ ծանօթանալու. իսկ քարոզչութեան գործը լրացնելու և աւելի կենդանի դարձնելու համար տաղանդաւոր դատախօսները պէտք է հրապարակական դատախօսութիւններ կարդան: Վերջում նա աւելացնում է, որ ինչքան էլ ուղղափառ ինքնադրուխ եկեղեցիները աղքատ լինեն նիւթականի կողմից՝ նոցա բարոյական ոյժը այնուամենայնիւ այնքան մեծ է, որ եթէ ռուսաց եկեղեցին ուզենար այդ ոյժից օգուտ քաղել, միսիոնարական գործը աւելի յաջողութիւն պէտք է ունենար: Ճափոնիայում, Ամերիկայում ուղղափառ ռուս քարոզչութիւնն աւելի ընդունելութիւն կգանէր, եթէ միայն ռուսական

ընաւորութիւն չունենար: Ուստի աւելի նպատակայարմարը գործի յաջողութեան տեսակէտից, հեղինակի ասելով, այն կլինէր, որ ուղղափառ ընդ որ ինքնադրութեալ եկեղեցիները՝ բոլորական, ռուսփրնական, սերբական և այլն, մի ընդհանուր տիեզերական միասնարական—ընկերութիւն կազմէին. դորա առաջ այն խոչընդոտները տեղի կտային, որոնք այսօր ռուսական միասնարական գործին արգելք են լինում:

— Վրաց եկեղեցու ներքին կեանքի մասին հետաքրքրական տեղեկութիւններ ենք գտնում այն զեկուցագրի մէջ, որը Ալաւարդի Դիմիար եպիսկոպոսը ներկայացրել է Վրաստանի էկզարխին, Սինակի, Թելաւի և Գօրու գաւառների եկեղեցիներն այցելելուց յետոյ: Պատահում են գէպեր, ասում է նա, երբ քահանաները սաստիկ անհոգ են վերաբերուում գէպի սեղանի սրբութիւնները. անհրաժեշտ է յորդորել գործակալներին, որ նորատուրեցներին հոգևորականներին, թէ ինչպէս պիտի պատրաստել և պահել պահեստի ու նշխարը: Քահանաները անհոգ են նոյն խիստ սեղանի նկատմամբ, որ մի եկեղեցում ու սեղանի վրայ, փոխանակ մաքուր, սահմանուած կտորի, ձգել են հասարակ և անմաքուր կտոր. իսկ մի սուրճ տեղ ըստընդուն կեղտոտ մի սրբուոց էր: Մի եկեղեցում էլ սեղանի ծածկոցի տակ ընկած էին պղնձի և արծաթի դրամներ, մասնաւոր նամակ քահանային գրած և մի հին հրովարտակ: Մի եկեղեցում ու Գիրքը ընկելու համար գործ էր ածուում մի հին թաշկինակ, որի վրայ դրոշմուած էր Վրաց մի հեղինակի պատկեր: Երկու եկեղեցում մկրտարանը այնպիսի դրութեան մէջ էր, որ առանց կսիծի չէր կարելի նայել: Մի հարուստ եկեղեցու սրբազան անօթները շինած էին կապուրից, մի ուրիշ եկեղեցում սեղանի վրայի խաչը փոքր, հին և կոտրտած պղնձից էր շինած, և այդ ոչ թէ եկեղեցու աղքատութիւնից, այլ քահանաների անհոգութիւնից: Սրբոց պատկերները մեծ մասամբ հին և խեղճ գործեր են: Հատ տեղերում քահանաներն անձամբ չեն ուղղորդեցնում ժողովրդին զալ և օրհնութիւն ստանալ եպիսկոպոսից՝ չեն հասկացնում ծխականներին, որ եպիսկոպոսին առաջին անգամ պիտի ներկայանալ եկեղեցում: Հատ անգամ տարօրինակ տեսարաններ էին լինում. ժողովուրդը կանգնած է փողոցում, երկրպագում է անցնող առաջնորդին, իսկ եկեղեցում ոչ ոք չկայ, որ կարելի լինի խօսք ասել նրանց կարիքների մասին ...: